

10512

891-99

14-22

91.542-1

h-22

ԳԻՒԼԱՅԻ

ՊԵՏՕՆ

ՃՇԳՐԻՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵՋՈՎ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՆԱՂԵԱՆՑ.

ԵՐԵՒԱՆ Ի ՏՊԱՐԱՆԻ
Ա. Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ: ՅՐԻՎԱՆԻ ԿՈՊԵՐԱԿԱՆ
Ա. Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ: А. С. ГУЛАМПИРЯНЦА.

1895

2003

891.542-1

10-22 48

ԳԻՒՂԱՑԻ

ՊԵՏՈՆ

ՃՇԳՐԻՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Լեզուով.



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆԱՂԻԱՆՑ.

ԵՐԵՒԱՆ Ի ՏՊԱՐԱՆԻ
Ա. Ս. ԳՈՐԼԱՄԻՐՅԱՆՑ:

ЭРИВАНЬ ТИПОГРАФИЯ
А. С. ГУЛАМИРЯНЦА.

1895

2563

1880144

10210

1880144 10210 249458

Дозволено цензурою 3-го Октября, 1894 года, г. Тифлисъ.

ԴԷՊԻ ՊՕԷՄԱՆ.



Դո՛ւ ևս պիտի փոշուն մատնուես,*)
Կեր դառնաս երկրի անկուշտ որդերին.
Մեր հոգու վշտի այդ կողմը ծածկես,
Յաւիտեան անյայտ թողես աշխարհին:

* *

Ե՛ւ ես անօգուտ ընդդիմադրութեամբ
Կանգնած անողոք ճակատագրի դէմ՝
Լցուած անսահման մոռլ բարկութեամբ—
Մինչև երբ պիտի այդպէս մաքառեմ:

* *

Օ՛, տարի՛ր, տարի՛ր, այս զաւեր դարու
Սև աբառները թող, որ չճածկունեն.
Թող դատաւիճի ու դ կարդայ ապագան,
Քեզ մահ տուողներն նրան յայանուեն...

1894 թ. Սեպ. 1.

*) Մեր մէջ քննադատական բացակայութիւնը,
սթէտիքայի կատարեալ անկումը, երևոյթների սը-
ալ բացատրութիւնը, մաւուր և բարոյական զար-
ուցման անուղիղ բռնած ճանապարհը, սահմանա-
նակ և միակողմանի ղեկավարների տրոփուտական
շխանութիւնը, տեղի են տալիս զրտկան անթիւ-

I.

1894 թ. Օգոստոսի մէկից մինչև երկուսը:

Սրանից քանի մի շաբաթ առաջ
 Ես և հարեան գիւղացի Պետօն՝
 Անց էինք կենում նորքի լեռներով:
 Երկար ճանապարհ պիտի անցնէինք:
 Պետօն կարծես թէ ինձնից խռոված,
 Առաջուայ ուրախ սիրտը կորցրած,
 Երբեմն ինձնից առաջ էր գնում,
 Երբեմն խեղճը շատ յետ էր մնում:
 Ես փորձում էի նրա հետ խօսել,
 Տխրութեան մասին մի բան հարցնել,
 Բայց նա զրանից միշտ խոյս էր տալիս:
 Մերթ հառաչում էր նա, մերթ տնտնում,
 Մերթ խիստ կատաղած մազերն էր պոկում,
 Եւ նրա ցաւը մարդ չէր հասկանում:
 Յանկարծ խղճուկը դիւահարի պէս՝
 Վազ տուեց առաջ, խիստ դժգոյններես,
 Տարածուեց մամռոտ մի քարի վրայ,
 Սկսեց խիստ լալ ու գոռալ, վայ, վայ:
 Ի՞նչ ողորմելի տեսարան էր այդ,

ախուր երեւոյթների. փոշուն են մատնում այն ամեն
 գրուածները, որոնք չեն յարմարւում դրանց ժանգա-
 հար ճաշակին...

Թողէք ես նրան ձեր դէմ չհանեմ,
 Դրանով գուցէ մեծ ցաւ պատճառեմ:

* *

— Սիրելի Պետօ, ի՞նչ պատահեց քեզ,
 Ասա ինձ խնդրեմ, Աստուածդ սիրես,
 Եդ չոր քարի մէջ ի՞նչ կայ, որ էդպէս,
 Երուած համբուրում, գրգռւմ լիզումես:
 Դէ ասա, Պետօ, ասա ինձ, խնդրեմ,
 Գուցէ մի բանով ցաւդ ամօքեմ:
 Նրա արցունքը դէմքին չորանցած,
 Կարծես ախ ու վայն առ ժամ մոռացած,
 Բարձրացաւ քարի վրայից, նստեց.
 Բայց յանկարծ ընկաւ, քարն էլն գրկեց:
 „Ախ նա՛տօ, նա՛տօ, սիրելի նա՛տօ,
 Աչքերդ բաց արա՛, ու տես քո Պետօն
 Ի՞նչ անտանելի ցաւէր է քաշում,
 Ի՞նչպէս է ցաւից սիրտը քրքրւում:
 Ախ, արի արի, մէնակ էս ցաւեր
 Չեմ կարող տանել՝ էս սրտով աւէր,
 Ախ, արի, արի, նա՛տօ ջան, արի:”

* *

— Պետօ ջան, Պետօ դարդդ ինձ պատմի,
 Պատմելով գուցէ ցաւիցդ պակսի,
 Պատմելով կոչրծքդ կ'թեթեանայ,
 Երկար չի տևիլ ցաւդ, կ'գնայ:
 Դժան երուանդ ջան, քու դարդը առնեմ,

Թող ես չ'խօսեմ, թող ես սուգ անեմ,
 Թող, որ էս լեզուն լուռի, պապանձուի,
 Ինչ որ էլէլայ էլ թող նա չասի:»

*
 * *

— Հաւատացիր ինձ, ցաւդ կ'յաղթես,
 Եթէ բոլորը մի առ մի պատմես.
 Երեւի ցաւդ այնպէս մի ցաւէ
 Յիշատակելու որը արժան է:
 Գիւղացի Պետօն այնքան յամառ էր,
 Որ նա պատմելուց միշտ հրաժարուէր.
 Վերկացաւ տեղից, մի խոր ախ քաշեց,
 Իր պատմութիւնը այսպէս սկսեց:

II.

Աշխարհի միջին քիչ մարդ է էլէլ,
 Որ ինձ պէս կնկայ սէրը վայելէր.
 Ա՛խ Նատօ, Նատօ, նա մի հատիկ էր.
 Եթէ նա մի օր ինձի չտեսնէր,
 Խեղագարի պէս քուէէքը կնկնէր.
 Ում որ էլ տեսնէր, պիտի հարցնէր,
 «Ձէք տեսել էստեղ խղճուկ Պետօյին,
 Ո՛ւր էր նա գնում, ի՞նչ կար իր ձեռին:»
 Էն անյայտ տեղից հէնց առն կ'գայի՝
 Սիրտը գցելով դէպ ինձ կ'վազէր,
 Ռանգը գցած ճոռով կ'նկնէր.

Հէնց կիմանար թէ ինձնից սափահար մէջ ոչ ոք
 Մի հառ մարդ չկայ աշխարհի մէջին: Դա ինչպէս
 Շատ անգամ նա ինձ հսպէս էր ասում.
 «Պետօ ջան, որ դու մօտս չես ըլլում, երբ
 Մենակութիւնն ինձ ընէ՛նց է սանջում, գոյն
 Ընէնց է նեղում, ընէնց չարչարում: Ես
 Ասես թէ հոգիս ուղղումէ թռչել,
 Ասես թէ սիրտս ուղղումէ ձաքել:»
 Առաւօտուանից ընչանք իրիկուն,
 Հնձի ժամանակ նա հօնձ էր անում,
 Կալէ ժամանակ նա կալն էր կտտում.
 Ամենից շուտով քնից կարթնանար,
 Ու արագ արագ բանին կ'կենար.
 Հացը կ'թխէր, կովը կ'կթէր,
 Մածուն կ'մերէր, պանիր կ'շինէր,
 Մի խօսքով տանս պահապանս սինն էր.
 Մի շատ ծանր բան հետս անելիս՝
 Երբ նկատումէր ինձ նեղանալիս,
 Փաթաթումէր ինձ ու սիրտ էր տալիս.
 «Մի վախի՛ր Պետօ, քանի ես սաղեմ,
 Դարդ ու ցաւերը քեզնից կխլեմ.
 Դարա արա էն օրն երբ ես կ'մեռնեմ:»
 Ա՛խ, անցկացած օրն ինչքան քաղցր ա,
 Միտդ գցելիս ինչքան մեծ դարդ ա.
 Ա՛խ էրնակ էր էն սիրուն գշերը՝
 Երբ որ նստած ինք՝ աղբրի եզերքին,
 Խղճուկ Նատօյիս հետ խօսում էինք.
 Ի՛նչպէս ղշերը կանանչ թփերից

Դուրս էին ուտնում, ինչպէս վերեւից
Բարակ սառ հովը գալիս էր փախչում,
Ինչպէս ալբերը կամանց ձէն հանում:
Ինչպէս կարմրախեթն միջին էր լողում:
Խօսումինք թէ ո՞նց էստեղ սիրուեցինք,
Թէ ո՞նց մենք իրար օրթում տուեցինք,
«Թէ մեր հերերը մեզ իրար չտան,
Գեղը կ'թողենք, կ'փախչենք կերթանք,
էն ժամանակը թող մեզ հեռ ընկնեն,
Որտեղ ուզումեն, թող էնտեղ գտնեն:»
Ախ մարդ ասածդ ինչքան վատ բան ա,
Ինչի՞ չ'պիտի միտքդ բռնան ա,
Անցկացած բաներն միտք չ'բերի,
էս անհանգչելի կրակով էրի:
Ձէ, չէ, Երուանդ ջան, թող էլ բան չասեմ,
Պատմութեանս թելը թող էստեղ կտրեմ:

* *

— Խնդրումեմ Պետօ, դէ՛ շարունակիր,
Դու չես փոշմանիլ, ինձ հաւատացիր:
Շատ տանջուած Պետօն էլի ախ քաշեց,
Յաւալի կերպով դարձեալ սկսեց:

* *

— Լեզուս տկար ա էն ամենն ասի՝
Ինչ որ ապրում ա էս սրտի միջին:
Նման տուր ինձ էն մէջք կոտրած օձին,
Որը ընկած է քարերի միջին:

Մի դհից արեւն էրում է կրակում,
Մի դհից միջինն է նրան քրքրում:
Ուզում ա փախչել, միջին ոյժ չկայ,
Ուզում ա սատկել՝ սատկելուն վախտ կայ:
Գիտն՞ աշխարհում չարչարանքներից
Ո՛րնէ շատ դժար, ծանդր ամենից:
Սրտով մի սիրած կնիկ ունենալ,
Նրա հեռ սիրուն էս դաշտերն մանգալ,
Ամեն մի քարի ու ծառի կշտին,
Նստես, աչքերդ գցես երեսին,
Մի կամ թէ երկու քաղցր խօսք ասես,
Նրա փոխարէն հազարը լսես՝
Բոլորը անկեղծ սրտից դուս էկած,
Բոլորի հեռ էլ արտասունք թափած:
Յոնկարծ մի հատ օր նրան կորցնես,
Ու առանց նրան էստեղ թափառես:
էս ծառի տակին, էն ջրի մօտին,
Տեսնելու յոյսդ յաւիտեան կտրես:
Լաց էի ըլում, երեխի նման,
Դոռ գոռում էի սելափի նման,
Սարից, քօլերից, քար ու ծառերից
Պահանջում էի կորած Նատոյիս:
Սիրտս ճաքում էր, նա չէր երևում,
Նս էլի գոռալ էի սկսում:
Վախտ վախտ էլ երգումէի բայաթին,
Ծաղիկները, մեր ման եկած տեղի,
Սիրուն զէրը, չոլի հաւերը,
Քար ու քօլերը, սառն աղբրները

Տխրած ձէներով, Նառոյիս լեզուով
 Լաց ու բայաթուս պատասխանումին...
 Շատ անգամ տրտում ես հունձ անելիս, ու ծայր մ
 Միտս'ի գցում, նստում'ի լալիս.
 Մտիկ'ի անում գիւղի նեղ ճամփին,
 Թէ հրէս կ'գայ նա հացը գլխին,
 Հրէս էն ուռու տակից դուս կ'գայ,
 Հրէս դարվերի գլխին կերեայ:
 Հէնց էդ յոյսերով ճամփէն'ի պահում,
 (Յանկարծ սիրտս շատ էր ուրախանում.)
 Վայ իմ աչքերին, նա չէր երևում:
 Հունձս թողումի ինձի խաբելով,
 Ընկնումի ճամփէն շատ տխուր լալով.
 Թէ կերթամ նրան էլի կտեսնեմ,
 Ելի կ'դառնամ գործս կսկսեմ:
 Եդ հալի միջին քունս էր տանում,
 Մի տեղ ընկնումի պառկում ու քնում,
 Դեռ քուն չմտած՝ նրան եմ տեսնում,
 Ի՛նչպէս էր նրա ռանգը գցած,
 Ա՛խ ո՛նց էր երեսն գաճի պէս սպռած.
 Ինչքա՛ն էր դեղնել մաշուել նիհարել,
 Էն ուրախ աչքերն ի՛նչպէս ին փոխուել:
 Մօտենում էր ինձ զգում, փայփայում,
 Սառը ձեռներով ձեռս էր բռնում,
 Սառնացած կուրծքը դօշիս կպցնում.
 Նայում էր երկար, երկար երեսիս,
 Ասես թէ մի բան ուզէր ասելիս.
 Բայց ա՛խ, զժողքը լեզուն էր փակել,

Խօսելու հրաման նրան չէր տուել:
 Խտտում էի նրան, համբուրում,
 Լացէի ըլում, սաստիկ աղաչում,
 „Ա՛խ ողորմի՛ր ինձ, նազելի Նառո,
 Տես ո՛նց է տանջւում սիրելիդ Պետոս.
 Տես դու մեռած տեղդ էնքան չես փոխուել,
 Որքան ես էստեղ ապրելով մաշուել.
 Ո՛վ է քո լեզուն էդքան պինդ կապել,
 Եդ ո՛ր անհոգին, ո՛ր անաստուածը.
 Անջաղ եմ տեսել, խօսն, Նառո ջան,
 Ասն ինձ, էլ հօ չես գնալ ըստեղան,
 Ել հօ մենակ ինձ դաշտում չե՞ս թողալ,
 Մենակ աշխատել ու մեն մենակ լալ:
 Լսի ինձ Նառո, թէ գնում էլ ես,
 Համբերի քիչ էլ, աղաչումեմ քեզ.
 Տե՛ս, տե՛ս, ա՛խ սիրտս ո՛նց է տրորւում,
 Տես ո՛նց տեղիցը դուս դալ է ուզում:
 Յանկարծ շատ տխուր մի ծիծաղ բերնին,
 Փախչումէր՝ ծածկւում խաւարի միջին:
 Լեզուն ինչ բան ա, էդ չար սհաթի
 Արած բաները՝ որ մի մին ասի.
 Մարդ ինքը պիտի էդ սիրտն ունենայ,
 Ինքը էդ սրտով էդ ցաւը քաշի,
 Որ նոր էդ ցաւը ինքնէլ հասկանա.
 Ինչքան էլ ճարտար լեզու ունենաս,
 Անհնար ա սրտի լեզուով խօսաս:

III.

Էդպէս Աստուած իմ գլխին քար գցեց,
Սիրուն Նատոյիս ձեռիցս խլեց,
Համա մի անգամ ինձ չկորցրեց:
Նատոս մեռնելու կարծես ինձ խղճաց,
Մի հինգ տարեկան աղջիկ ինձ թողաց.
Իմ սիրուն, փափլիկ, թխլիկ Սաբէթս՝
Ամեն բանով էլ նման Նատոյիս՝
„Վայ իմ Սաբէթ ջան, վայ իմ աչքերին,
(Սկսեց գոռալ ու խփել գլխին.)
Ախ ի՞նչ էլար դու, քեզ ի՞նչ արեցին,
Ծեր դարձած հօրդ էլ չխնայեցին:“

* *

--Սիրելի Պետո, մի՛ էդքան ցաւիր,
Դու իմ սիրտն էլ կրակ գցեցիր.
Մի՛ տանջուիր էդքան, խնդրում եմ վեր կաց,
Ամեն բանն էլ ինձ պատմիր սրտաբաց.
Թէ հասցրել են քեզ մի վատ չարիք,
Կ'գտնուեն դեռ, գիտեմ, լաւ մարդիկ,
Բոլոր վրէժդ նրանք կլուծեն,
Էդ ծանր ցաւերդ թէ վեր չդնեն,
Ինձ ինչ ուզումես ամենն էլ ասա,
Հաւատացիր ինձ, լաւ մարդիկ շատ կան:
Պետոն վերկացաւ աչքերը սրբեց,
Տխրալի ձայնով դարձեալ սկսեց:
Սիրուն Սաբէթիս ընենցի սիրում,

Ընենց խնամում, ընենց պաշտպանում,
Որ ոտնու ձեռը մի փուշ մանելիս
Կարծես թէ աչքս ըլէր անկուելիս:
Ես թաթը բռնած, ես էլ խտտիս՝
Ուր որ գնումի հետս տանումի՝
Հանդը, թէ սարը, վարի, կամ հնձի.
Խղճուկ երեխան հունձը անելիս՝
Բռնումէր ձեռս, նայում երեսիս.
Հրեշտակի պէս ժպտում-ծիծաղում
Ու էդ ժպտով ինձ մտիթարում:
Չէի խնայում նրանից ոչինչ,
Ինչ որ էլ ուզէր՝ բերի ամեն ինչ:
Մի խօսքով Նատոն մոիցս էր գնում,
Երբ որ Սաբէթիս մոիկի անում:
Բայց մի բան, մի բան մոիցս չի դնայ,
Թէ գերեզմանիս մի թիզ խոտ դուս գայ:
Նրեխինը որ կայ՝ հարազատ մէրնա,
Ո՞վ պիտի նրան իր մօր համը տայ.
Թէկուզ Աստուած էլ վերեւից վեր գայ՝
Էդ անկարելի, չլելու բան ա:
Պաշտելի Սաբէթս մօտս էր քնում,
Սիրուն գլուխը կռներիս դրած,
Փափլիկ թաթերը դօշիս կպցրած.
Դիշերը հազար անգամ զարթնումի,
Թշերիցը պինդ պաշպում էի:
Դշերուայ կէսը ես չէի քնում,
Թէ ջուր էր ուզում, վերէի կենում
Նարկանց, ոտաբաց ջուրէի տալիս,

Թէ լաց էր ըլլում օրրոտ էի տալիս,
Բայց ես էլ թագուն հետնէի լալիս:
Նրկար ժամանակ ձէնը չէր կտրում,
Վեր էր կենում ու տեղումը նստում,
Զորս դիհը երկար, շատ մտիկ անում:
ՊՅ մայրիկ, մայրիկ, մայրիկս ուրա:
Դուրս էր գալիս եւ մօտիցս փախչում,
Մէրը կորցրած գառան պէս մայրում:
Պտտում էր նա ամենտեղ՝ բազը,
Մտնում էր գոմը, դուս գալիս մարգը,
Գնում ամեն տեղ յմայրիկ՝ ձէն տալիս,
Տուն էր եղ գառնում էլի խիստ լալիս:
Էդքան մեծ ցաւը ես չտանելով՝
Գնում էր ուշս ինձ գետնին տալով:
Նա եղ էր դառնում խիստ ձոււմ յհայրիկ:
Ուշս էլի ետ գլուխս էր դալիս:
Նա լաց ըլլելով ինձ հարցնումէր.
Պա ասումիր թէ մայրիկը դժւանէր,
Բա ասումիր թէ նա էգուց կ'դա՞յ,
Բա ասումիր թէ նա մեր բա՞ղչումն ա:
Նորից խեղդումի, ուշս էր գնում
Ու մեռածի պէս գետինը ընկնում:
Հարեան կնիկ, ու պառաւները
Ինձ ասումին, յտար գերեզմաները,
Նրեխէն թող մօր շիրիմին նստի,
Ոտ ու ձեռներին սառը քուր գցի,
Տես սիրտը մօրից է՞լ չի հովանալ,
Տես առաջուայ պէս էլի՞ կուզի լալ:

Ես հազիր էի ամեն բան անել,
Թէկուզ աշխարհի էն ծէրը հանել:
Խղճուկ երեսան որ մօրը մօռնայ՝
Էլ գշեր ցերեկ չարտասուի, չլայ:
Ստում են աշխարհն լուսաւորուել ա,
Քաղաքներում շատ գիտուն մարդիկ կան,
Դէ թող էս թաւուր ցաւին ճար անեն,
Ինձ իրանց դռան խեղճ ճորտը շինեն.
Ով գիտուն մարդիկ, ինձ մեղք չդնէք,
Թէ էս սհաթին իմ սիրտը մտնէք,
Ինչ թաւուր ցաւ կայ թէ որ լաւ տեսնէք,
Պաաֆ էդ մարդին՝ էն վախտը կասէք:
Իմ ցաւը լեզուով ասել չի ըլիլ,
Սրտիս հովութիւն լեզուն չի բերիլ:
Ինձ մահը, մահը մենակ կազատի,
Իմ ցաւը ուրիշ մի հառ ճար չունի:

IV.

Վերջապէս էսքան դառը օրերում,
Մեծացաւ էլաւ տասը տարեկան,
Հիմի կ'պատմեմ թէ գեղը ինչու՝
Թողեցինք եկանք էս ձեր երևան:
Էն օրը սե ըլիլ, որ մենք չգայինք,
Լաւ էր գեղումը սոված մեռնէինք,
Հազարապատիկ մեռնելը լաւ էր,
Հազարապատիկ մեռնելը փառք էր:

Թէ լաց էր ըլլում սիրտ էի տալիս,
Բայց ես էլ թագուն հետնէի լալիս:
Նրկար ժամանակ ձէնը չէր կտրում,
Վեր էր կենում ու տեղումը նստում:
Ձորս դիմը երկաթ, շատ մտիկ անում:
„Ս.Մ մայրիկ, մայրիկ, մայրիկս ուրա:
Դուրս էր գալիս եւ մօտիցս վախճում:
Մէրը կորցրած դառն ալիս մայրում:
Պատում էր նա ամենտեղ՝ բազը,
Մտնում էր դոմը, դուս գալիս մարդը,
Գնում ամեն տեղ „մայրիկ“ ձէն տալիս,
Տուն էր եղ դառնում էլի խիտ լալիս:
Էդքան մեծ ցաւը ես չտանելով՝
Գնում էր ուշ ինձ գետնին տալով:
Նա եղ էր դառնում խիտ ճում „հայրիկ:
Ուշ էլի ետ գլուխս էր դալիս:
Նա լաց ըլլելով ինձ հարցնումէր.
„Բա ասումիր թէ մայրիկը դժմաւէր,
Բա ասումիր թէ նա հզուց կ'ըզոյ,
Բա ասումիր թէ նա մեր բաղնիքն ա:
Նորից խեղդումի, ուշ էր գնում
Ու մեռածի պէս գետինը ընկնում:
Հարեան կնիկ, ու պառաւները
Ինձ ասումին, „տաք գերեզմաները,
Նրեխէն թող մօր շիրմին նստի,
Ոտու ձեռներին սառը ջուր գցի,
Տես սիրտը մօրից էլ չի հովանալ,
Տես առաջուայ պէս էլի կուզի լալ:
66

Ես հազիր էի ամեն բան անել,
Թէկուզ աշխարհի էն ծէրը հասնել:
Խըճուկ երեխան որ մօրը մօռնայ՝
Էլ գշեր ցերեկ չարտասուի, չլայ:
Ստում են աշխարհն լուսաւորուել ա,
Քաղաքներում շատ գիտուն մարդիկ կան.
Դէ թող էս թաւուր ցաւին ճար անեն,
Ինձ իրանց դռն խեղճ ճորտը շինեն.
Ով գիտուն մարդիկ, ինձ մեղք չդնէք,
Թէ էս սհաթին իմ սիրտը մօռնէք,
Ինչ թաւուր ցաւ կայ թէ որ լաւ տեսնէք,
„Իսաֆ էդ մարդին“ էն վախտը կասէք:
Իմ ցաւը լեզուով ասել չի ըլլել,
Սրտիս հովութիւն լեզուն չի բերիլ:
Ինձ մահը, մահը մենակ կազատի,
Իմ ցաւը ուրիշ մի հատ ճար չունի:

IV.

Վերջապէս էդքան դառը օրերում,
Մեծացաւ էլաւ տասը տարեկան,
Հիմի կ'պատմեմ թէ գեղը ինչո՛ւ
Թողեցինք եկանք էս ձեր երեան:
Էն օրը սե ըլլել, որ մենք չգայինք,
Լաւ էր գեղումը սոված մեռնէինք.
Հազարապատիկ մեռնելը լաւ էր,
Հազարապատիկ մեռնելը փառք էր:

Դու գիտե՞ս եղբայր, էս քանի տարին
 Խնչքա՞ն ցաւ քաշեց անտէր գեղացին:
 Սոված մնալնէլ շատ դժար բան ա,
 Աստուած դուշմանիդ սովը շանց չտայ:
 Հալիւորներից ես շատ եմ լսել,
 Որ մարդիկ իրար սովեց են կերել:
 Էս քանի տարում էլ մարդ չմնաց,
 Աղքատ ու հարուստ մնացին սոված:
 Հախ ա լաւ մարդիկ մեզ օգնումէին,
 Բոյց էն շատ քիչ էր, սովածներն շատին.
 Խնչ որ ունէին բոլորն ծախեցին,
 Տան մէջը կարպետ խալի չթողին.
 Ամենն ծախեցին՝ եղ, տաւար, գութան,
 Եդ հալա քիչ էր, պարտքի տակ ընկան.
 Մի դհից անտէր սողնէր մեզ զօռում,
 Մի դհից անխիղճ պարտքատէրերը
 Գալիսին անվախ դռները կտրում:
 Ընտել ըլէիր, աչքով տեսնէիր՝
 «Շանիցը փիս ա մարդը,» կասէիր:
 Շանը երբ որ դու լաւ կերակրում ես,
 Նա իր ընկերին (աչքով տեսնում ես)
 Սկի չի կծում, ու չի քրքրում.
 Մարդ ասած բանը հէջ չունի կշտում.
 Թէ կուզ սող աշխարհը վեր կալ տուր նրան,
 Համա հէնց տեսաւ մի իրան նման
 Մարդի տուած է թէկուզ փոքր բան,
 Կուզենայ նրան կծի, քրքրի
 Ընչանք որ ձեռից ապրուստը խլի՝

Ու ասի, դարձի դու իմ ճորտը դառ,
 Արժան չես ըլլի ինձ հետ հաւասար:
 Հէնց էդ դարդիցն էր, ըսէնց թողեցինք
 Մեր տուն ու տեղը՝ ստեղծեցինք:
 Մօտ էր ձմեռը, ինչ գեղեց կկանք,
 Ու խիստ ցրտերին քաղաքը հասանք:
 Նրեք օր ըստեղ, ընտել ման կկանք,
 Բայց սթրուելու մի տեղ չգտա՞ք:
 Ձուխտ աչքիս լսին բարեբար պահած,
 Ձեռ ու ոտները ցրտից կապտած,
 Աչքս Սաբեթի վրէն չէ՛ր ընկնում,
 Աշխարհը գլխիս քանդւում էր մթնում:
 Խեղօք Սաբեթս էդ հասկանում էր,
 Աչքերը դցած աչքիս ասումէր.
 «Հայրի՛կ, չլի՞ թէ ինձ համար ցաւես,
 Լաւ տաքացելեմ, էլ չեմ մըսում ես:»
 Նրա խօսքերից ես սիրտի առնում
 Ու ընկած դէս դէն առաջինք դնում:
 Վերջապէս մի տեղ, մի հաւաքնում
 Մեզ տեղ տուեցին, կնտեղինք մնում:
 Տեղներս ցուրտ էր, պատերը ծակ-ծակ՝
 Տունը ձիւն էր լցւում քամի ժամանակ:
 Ձմեռն էր, ամեն տեղ ձիւնով ծածկուած,
 Մարդիկ, անասուն դաշտերից փախած.
 Թեւաւորներն էլ չէին երևում,
 Իրանց համար տաք տեղին որոնում:
 Խնչ անէի ես, աշխատանք չկար.
 Թէ ես ըլլէի գերծիկ կօշկակար՝



Կ'կարենայի մի բան աշխատել,
Ինձ, իմ Սաբեթիս սովից ազատել.
Մշակութիւնից ուրիշ բան չկար,
Էնտեղ քաղաքում անել ինձ համար:
Ա՛խ, ի՞նչ անէի, մոռացկանութիւն.
Ա՛խ, դու անաստուած լիբբ սովածութիւն,
Ձկայ քեզ համար հէջ ազնուութիւն.
Ամեն բան ոտի տակ ես դու տալի,
Ձեռ վախում գործից դու ամօթալի:
Ինձանով ըլէր՝ ես կ'մեռնէի,
Ձեռս ուրիշին դէմ չէր անի.
Համա Սաբեթիս դժար էր թողել
Սովի տանջանքից էնպէս թողոմել:
Վայ ինձ, դողալով ձեռս մեկնելիս
Ալէքն ինձ ընենց աչք'ին շանց տալիս,
Ամօթն ամեն բան մաքրիցս էր հանում,
Եւ մինչև անգամ իմ սովածութիւն:
Էնտեղ որտեղ որ մենք ապրում էինք,
Կար երկու տղայ ու մի չար կնիկ.
Ասենք տղէքն էլ շատ պակաս չէին,
Չարութիւններով իրանց վատ մօրից.
Նրանք վատ աչքով էին մեզ նայում,
Մեզ նրանք տանել չէին կարենում:
Մեր տանը մի լաւ կատու ունէինք,
Որ մեզ հետ նրան կերակրում էինք:
Մի օր հայվանը նրանց տուն էր մտել
Մի կտոր պանիր գողացել կերել.
Իաւական չէր, որ էնքան ծեծել'ին,

Յետոյ նաւթ քսել ջանն, էրէլ էին:
Մեզ ընէնց փիս փիս մօրիկ'ին տալիս,
Որ կարծեա թէ մեզ ըլէն ասելիս՝
„Կորէք էտեղից, ի՞նչէք վեր ընկել,
Մահասիլի պէս՝ գլխներիս կանգնել:“
Հալա լաւէր, որ տունն իրանցը չէր,
Նրանց էլ վարձով էդտեղ տուածէր:

V.

Էդ անասելի չարչարանքներով,
Ի՞նչ անտանելի ախ ու վայերով,
Անցկացրինք մենք էն ցուրտ ձմեռը,
Գեանով տուեցինք էն ծանր բեռը:
Ի՞նչ անուշ հոտով էկաւ գարունքը,
Ի՛նչպէս բաց արեց տխրած աչք ունքը:
Սար ու դաշտերը կանանչին տուին,
Ծառերը ճերմակ ծաղկով բացուեցին:
Պղտոր ջրերը սարեր ձևելով,
Խիստ վաղում էին ոնց ամպ գողալով:
Գետը վարարած՝ ձորում գոռումէր,
Եզրի հին քարափն նրան նայումէր:
Ղշերը լէն լէն ծաղկոտ դաշտերի
Վրից թռչելով էկան հայրենի:
Մարդիկը ուրախ գործէին շինում,
Ժիր երեխէքը դէպ դաշան'ին վաղում:
Ամեն մարդ գոհ էր, ուրախանում էր.

Մենակ սե զարդը էս սիրտն ուտում էր:
 Միտս էր գալիս զափիւ մեր գեղը,
 եզս, գոմէշս, իմ տուն ու տեղը.
 Միտս էր ընկնում կանանց սարերը,
 Ու հազար ըռանդ էն ծաղկները.
 Միտս էր ընկնում վտրն ու դռնթանը,
 Լծի տաւարը՝ թէ կուղ մաճկալը.
 Միտս էր ընկնում քաղցրածէն լէ՛ լէ՛ն,
 Աշխարհը զլիս սաղ սեանումէր,
 Սիրտս կրճքիս մէջ սաղ քրքրումէր:
 Ա՛խ, ի՛նչ քան վատ տ քաղաքում ապրել,
 Ուռած աղէքանց երեսին նայել.
 Ի՛նչ թաւուր մարդ են էդ երեւոյցիք,
 Աշխարքում չկայ դրոնց պէս մարդիկ.
 Իրարու վրայ ընկնց են նայում,
 Ոնց որ ծեր թուրքը խոզին է նայում:
 Աստուած իմ, էդքան էլ չկամ մարդիկ.
 Ձեռին ճար ըլի՝ եղբայրը եղբօր
 Միսը կ'պոկի, շան պէս կ'խեղդի.
 Վա՛յ տ, որ մի մարդ թաղուն բան անի...
 Որ ամեն բանը մի մին չիմանայ՝
 Իրան չար սրտից մեռնել կուզէնայ.
 Հէնց որ իմացաւ՝ որտեղ որ տեղնէ
 Կ'գնայ կ'մատնի՝ դեռ կասի տեղն է:
 Էդ մարդկանց թէ որ դուր գալ ուզում ես,
 Պիտի ուրիշ մասին չար խօսես.
 Լաւ բանը նրանց աչքը ծակում տ,
 Ուրիշ լաւը նրանց դուր չի գայ:

Ա՛խ, ի՛նչ եմ տուել էն սիրուն գեղին,
 Դառը ցաւերից ազատող հողին:
 Ա՛խ կ'գնամ, կ'գնամ գեղում կաշխատեմ,
 Ուռած աղէքանց ձեռից կաղատուեմ.
 Աստրծու բարիք գեղին տուած,
 Ի՛նչ կայ քաղաքում փթած ու հոտած:

VI.

Հասել էր ամառն. հէնց էս մտքումը
 Ուզում ի գնալ գիւղը՝ մեր տունը:
 Սարեթս սիրուն, լաւ բոյ էր արել,
 Տաճմէկ տարին անցել թամամել.
 Ես նրան մենակ տանն էի թողում,
 Համա աղէքից շատ էի վախում:
 Ա՛խ ի՛նչ անէի, եքա աղջիկ էր,
 Հետս տանէի, էդ հօ ըլիլ չէր.
 Թուրքերի բաղում, ըստեղ ու ընտեղ՝
 Մշակութիւն ի անում օրն մի տեղ.
 Համարեա օրը տարի էր անցնում,
 Բնջանք հասնում էր մութը, իրիկուն:
 Սարեթիս ցաւը ինձ ապանում էր.
 Եաղ մարդի կշտին ասիւր ո՞նց կէր
 Թողաս աղջիկդ ընջանք իրիկուն.
 Էն էլ էն թաւուր չար մարդկանց մօտի՛ն:
 Մի իրիկուն էլ՝ ա՛խ, ի՛նչ իրիկուն,
 Բեղարած, ջարդուած ինձ գցեցի տուն:

Այն, Աստուած, աչքիս գուրդու թուաւ,
 Երբ որ Սաբեթիս տանը չտեսայ:
 Վազեցի, նրանց հարցրի. «ո՞ւր է»:—
 —Ախմախ գիւղացի, մենք նրա տէրն ենք,
 «Աստուած իմ, աղջիկս ես ձեզնից կուզեմ»:—
 —Դէ՛ կ'որի, ախմախ, նրանք գոռացին,
 Ու ինձ տանիցը թէղ դուս գցեցին:
 Գոռաճի նման՝ տանից դուս թուայ,
 Հազար ու մի նեղ քուչէքից անցայ.
 Ում որ տեսնում ի հարցնում էի,
 Նրանք ինձ սառը պատասխանում ին:
 Քաղաքում հարցից յոյսս կտրուեց,
 Ոչով մի կարգին սալը (տեղեկութիւն) չտուեց:
 Դուս էկայ, ընկայ սար ու դաշտերը,
 Ընկայ քաղաքի անթիւ բաղերը:
 Եղ վախտը սաստիկ մութը գիշեր էր,
 Մարդու աչք ամեն բան էլ ջոկում չէր.
 Քարափներն աչքիդ գեղին էրեւում,
 Ոտերիդ տակին օձերն'ին խշշում:
 Ամեն ձէն ու ձուն պապանձուել էին,
 Ոչ մի տեղ մարդիկ էրեւում չէին:
 Նստեցի մի տեղ. դուս էկաւ լուսինն,
 Սիրուն լիս տուեց սև քարափներին.
 Հազար մի սև միտք կիտուած իմ գլխում,
 Սիրաս որդի պէս ուտում ին, կրծում:
 Եարաք, ասում ի գեղերը կերան,
 Եարաք, ասում ի թուրքերը տարան:
 Այն, ինչ վատ բան ա անախէր կասկածը,

Մարդ կ'հասկանայ նրա արածը.
 Վախտ հասցնումէ ընչանք ընտել քեզ՝
 Որից պրծնելու մահդ ուզումես.
 Վախտէլ առաջիկ ընենց է քծնում,
 Ցաւերդ կորան հէնցէս իմանում:
 Վերջապէս մի հատ կարճ լողէում
 Դլխովս հազար բանէր անց կենում.
 Գոռում ի, ֆողը տալիս է գլխիս.
 Այն իմ Սաբեթ ջան, այն իմ աչքի լիս,
 Քեզ ի՛նչ օրով եմ պահել, պահպանել,
 Հմի աչքիցս ո՞ւր ես հեռացել:
 Նս էնքան էի լաց ու կոծ արել՝
 Արտասուք էլ չէր աչքումս մնացել.
 Վախտ վախտ սիրտս էլ հէնց էր քարանում,
 Սաբեթիս ցաւը մօրիցս էր գնում:
 Ինձ ինձ ասում ի, մարդն ինչ թաւուր բանաւ,
 Վախտ կայ էս ցաւը ընենց է զօռում,
 Վախտ կայ, որ ըսկի միտդ չես գցում:
 Հէնց իմանումես էլ աշխարհ չկայ,
 Մտիկ անելդ աշխարհին զուր ա.
 Հախա՛ աչքերդ նրան են նայում,
 Հոգիդ նրա դէմ շատ խոր է քնում.
 Թող աչքիդ առաջ աշխարհը կորչի,
 Եղ հոգուդ համար ըսկի մի բան չի:
 Համա ծնողի սիրտն ընենց բան չի,
 Որ ցաւը ընտել քնի չզարթնի:
 Եստեղ ու, հետեղ էլ մանի դալի.
 Ամեն մի քարի, ու քոլի տակից

Կանչումի՛ Սաբեթ, ու իմ զիւ ձէնից
 Քնած զշերը թռչում ին փախչում,
 Մի հեռու տեղում վախեցած թաղչում:
 Ման էկայ ընշանք լիս աստղը ծագեց,
 Լսի նշանը վերեւում գցեց.
 Մաքուր հովերը հասան վերեւից,
 Շունչ հանելով կանանչ ծառերից.
 Ծառերը ուրախ ծլկլոյցներով՝
 Զարթնած ծառից ծառ ժիր թռչկոտաւով,
 Աւետում էին սիրուն առաւօտն:
 Ուղտերի քարվանսն զնգզնգոցներով
 Անցէին կենում, մօտիկ ճամբէքով.
 Ճամբորդներն էլ թէզ ճամբայ ընկած՝
 Պինդ պինդ խօսումին խիստ ուրախացած.
 Վերեւում ամպերն կարմրին տուին,
 Սարերի գլուխն լուսաւորուեցին.
 Լիսն կամաց կամաց դաշտերն էլ փռուեց,
 Խփուած ծաղկունքը մի մին բաց արեց:
 Էդ սաղ գշերը մանէկած, ջարդուած
 Ընկայ մի տեղում ու խոր քնեցայ.
 Մի վախտ արեւը վրէս էր ընկել,
 Ու ջանիս մէջը թէժ կրակ գցել.
 Վեր կացայ. ցաւս էլ նոր ուժ առած,
 Սիրտս կրճքումս արինքամ էլած՝
 Վազեցի քաղաք նորից հարցնեմ,
 Մէկից էլա սուտ մի խաբար առնեմ,
 Համա ինձ լսել էլ չէին ուզում.
 Վէրքը տիրոջն է շատ նեղը գցում,

Ում ինչ դարդն էր թէ բռնեց ցաւ ունեմ,
 Որից ազատուել մենակ ոյժ չունեմ.
 Ընենց տեղ կայ մարդ դազունից փիս ա,
 Լեզւով ա միայն լաւ, ինձ հուստա՛:
 Մի օր ու գշեր էլ անցկացրի,
 Ու էքսի օրը ականջդ ի՛նչ լսի.
 Ա՛խ, էրնակ էր թէ ես չեմմնայի,
 Ու էդ բանը ինձ սկի չառէին:
 Կուզէի մինչ մահ չօլէ չօլ ընկած՝
 Ես յոյսս կտրած, ես էլ յոյս տռած,
 Աշխարքն աշխարքով տայի, պտուէի,
 Խղճուկ Սաբեթիս մանգի՛ր գտնէի:
 Համա ի՛նչ Աստծու պատիժ ինձ հասաւ,
 Կեանքս ձեռիցս խլեց ու տարաւ.
 Մի քանի մարդիկ մի տեղ ի օտում ին,
 Դէ էն վերեւ, էն սարի դօշին,
 Մի սիրուն աղջիկ խեղդած է, գցած,
 Ընշանք հիմի էլ տէր չի դուս էկած:
 Էդ որ ականջս զափիւ չլսեց,
 Սիրտս ընենց մի զայիմ թափ տուեց,
 Որ էլ չեմացայ ինձ հետ ինչ էլա.
 Ելի տեղեցս վեր թռայ տեսայ,
 Որ գլխիս անթիւ մարդիկէն կիտուել.
 Աղջիկը իմն ա, գլխի են ընկել,
 Հմի նորէն հետս խօսում, սիրտ տալիս,
 Որ ոչինչ չի տալ լոկ խօսքերն սրտիս:
 Կատաղածի պէս թողեցի փախայ,
 Դպա էն սարը որտեղ ընկած ա.

Ճամբումը մի մին ես ինձ խաբում ի,
 Պժ գիտի, բալքի նա չի.՝ ասում ի,
 Է՛հ, համա ո՞րանդ, մի սհաթուայ մէջ
 Սիրաս հազար մի աճնդ էր փոխում...
 Զիմացայ թէ ո՞նց էն անդը հասայ,
 Որանդ որ արդէն քեզ քաջ յայտնի ա.
 Հասայ, ի՞նչ տեսայ. վա՛յ իմ աչքերին,
 Օ! հազար վա՛յ իմ հոգուն ու սրտին...
 Բոլորովին մերկ արևում դցած,
 Երկու մեծ քար էլ կողքերին կանգնած.
 Զանր կապտած, էրեսը գետնին,
 Երկար մազերը շաղ անցած մէջքին.
 Երկու օր անտէր էնտեղում դցած,
 Արևի առաջ էրուած տապակուած.
 Վազեցի նրան ես պինդ գրկեցի,
 Ու ձեռս տարայ բլրակը (բազուկ) բռնեցի,
 Գամարի (երակ) վրա մատս դրեցի,
 Յետոյ աչքերը շա՛տ արորեցի,
 Ոտ ու ձեռները, շլինքն ու կուրծքը
 Մի մին ամենը լու շոշափեցի,
 Ո՞վ գիտի, ասի, մեռած չի ըլիլ.
 Զու՛ր, ջու՛ր, ջու՛ր բերէք, ամա՛ն, շուտ արէք,
 Զու՛ր բերէք շուտով վրէն ածեցէք.
 Զու՛ր էլ ածեցին, շատ ձէն տուեցի,
 Ու շատ դէս ու դէն նրան շուռ տուի,
 Ո՛րտեղ, յաւիտեան քնել էր, լռել.
 Էն սիրուն աչքերն ընե՛նց փոս ընկել,
 Էն սիրուն երեսն ընե՛նց թոռոմել.

Էն սիրուն ձեռներն, որ պատրաստ էին
 Ներել ամեն վախտ, ամեն մի մարդի՛
 Սառել, փետացել, չորացել էին:
 Էն անմեղ ծիծաղն սառած շթուներին,
 Իր դուշմաններին անիծում էին.
 Կարծես թէ սկի մեռած չլինէր,
 Հախա (ճշմարիտէ) շատ ախուր՝ բայց էլ ժպտումէր:
 Ո՛խ, որդի Սաբէթ, ետրաբ խեղդուելիս
 Ինչե՛ր դու պիտի լինիր ասելիս.
 Ետրաբ կա՛նչել ես՝ ինձ սպանեցին,
 Ետրաբ դրե՛լիս յոյս, ազատուելու,
 Միջոց եմ տուել հեռուն նայելու՝
 Ազատարարիդ՝ հօրդ սպասելու:
 Ետրաբ ի՛նչպէս ես աչքերդ դցել
 Նրանց էրեսին, խեղդուելիս նայել.
 Ետրաբ ի՛նչքան ես-ի՛նչքան վախեցել
 Ետրաբ ի՛նչքան ես դու թրպրատեցել:
 Լաց էի ըլում, զլխիս՝ տալիս,
 Համա մեռածին լացը ի՛նչ կանի:
 Ես նրա մօտը փռուած մնացի,
 Մինչև որ էկան վեր կալան տարան,
 Ու դրին նրան զարիբ գերեզման:
 Ընչանք էս օրէլ մարդիկ չեմոցան,
 Թէ ո՞վ է արել, ինչե՛նն արել,
 Էզ անմեղ մանուկն ո՞ւմ է ի՛նչ արել,
 Կամ թէ իմ սրտին ի՛նչ ցաւէ տուել,
 Ո՛նցեմ չարչարուել, ու ո՞նց եմ տանջուել:
 Իմ կեանքը հիմի նման է ինչե՛,



Չէ՞ անապատի միայնակ ծառի՝
Որն օգտուելով պատահած ջրից,
Կամ գարնան եկող յուր անձրևներից,
Կանանչումէ նա, աճում, մեծանում,
Անթիւ տերեւներ, ճղներ արձակում:
Հեռու տեղերից փախած զշերը
Թառում են էնտեղ, երգում երգերը.
Գալիս են մարդիկ շուքում նստում,
Ուտում, խմում են ու ուրախանում,
Գալիս է հովը, նրա հետ երգում:
Բայց յանկարծ մի օր ջուրը պակասած,
Գարնան անձրևներն միանգամ կտրած
Տեսնումես ահա ծառնէ չորացած:
Ղշերնէլ նրանից հեռու են փախչում,
Մարդիկը նրան էլ չեն այցելում.
Միայն խորշակը՝ էրող տաք քամին,
Դիպչումէ նրա չոր-չոր ճղներին.
Խշկշկումեն ու միշտ կոտորաւում,
Ամեն լուպէ մահին սպասում:

1894 Օգոստոսի 2.

Վ Ե Ր Ջ:



10512

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

2013

